№ 231 Դեկտեմբերի 25 1880 Դեկտեմբերի 25 № 231

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թւին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետևեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհաւատալի է.—Ներքին տեսութիւն. Ֆիլօկսէրայի մասին. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Դաւիթ բէկ.

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ Է

—

Լուր տարածվեցաւ, որ Էջմիածինը մասամբ ներեց Տէր-Յովհաննէս քահանային, կրկին թոյլ տուեց նրան փիլոն ծածկել, բայց բոլոր արարողութիւններից միայն մի խորհուրդ իրաւունք տուեց կատարել նրան, այն է խոստովանեցնել իր ծխականներին։

Մենք հրաժարվում ենք հաւատալ այդ տեսակ անճոռնի կարգադրութեանը, այն աստիճան հրէշաւոր ենք համարում նրան։ Եթէ քահանան արժանի է խոստովանեցնել, այն ժամանակ նա արժանի է և պսակը և մկրտութիւնը և այլն կատարել։ Իսկ եթէ քահանան անարժան է կատարել ամեն արարողութիւնները, ի՞նչպէս հօտը կարող է հաւատալ նրան իր սրտի խորհրդները, խոստովանվել անարժան մարդու առջև։ Ահա Էջմիածնի լօգիկան։

Բայց այստեղ մի ուրիշ գաղտնիք կայ։ Խոստովանութիւնը ոչինչ նիւթական արդիւնք չէ տալիս, ուրեմն այդ անշահաւէտ գործը կարելի է յանձնել Տէր-Յովհաննէսին տօն օրերին, իսկ մնացած արարողութիւնները շահաւէտ են, ուստի Տէր-Եզնիկը և Մամբրէ վարդապետը կարող են իրանց մէջ արդիւնքը բաժանել տօն օրերին, աչքի առաջ ունենալով, որ Տէր-Յովհաննէսի ծուխը Թիֆլիսի ամենահարուստ ծուխն է, գուցէ իրանց արդիւնքի մի մասն էլ Մանկունուն կուղարկեն մի որ և է ընծայի ձևով։

Ահա մեր ժամանակակից հոգևորականութիւնը, ահա այն եկեղեցական կազմակերպութիւնը, որ մեր խաւարասէրների ասածով, մեր ազգութեան գոյութեան նեցուկ է։

Եւ ինչ իրաւունքով ծխից խլում են նրա ընտրված քահանային և նշանակում են առանց ծխի կամքի մի ուրիշին։

Քահանան մի պօլիցիական պաշտօնեայ չէ, որի հետ քաղաքացին ունի միայն պաշտօնական, ձևական յարաբերութիւններ, քահանան մարդու հոգևոր խորհրդատու է, որի հետ մարդը ունի միմիայն բարոյական յարաբերութիւններ, այդ պատճառով մարդը ինքն պէտք է ընտրի իր համար այն քահանային, որի

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Զ.

Դուրս գալով Սիւրբի վրանից, Ահմէդը դիմեց դէպի մի վրան, որ բաւական հեռու էր կանանոցից և գտնվում էր անտառի խորքում։ Այստեղ կային մի քանի ուրիշ վրաններ ևս, որ յատկացրած էին խանի թիկնապահներին և նրա ծառաներին։ Մի մարդ կէս ճանապարհի վրա կանգնած, սպասում էր նրան. երբ տեսաւ ներքինուն, մօտենալով հարցրեց.

—Ի՞նչ եղաւ....

Ահմէդը պատմեց նրան, թէ ինքը ամեն հնար գործ դրեց, աղաչեց, պաղատեց, ոտքը համբուրեց, բայց տիկինը ասում է.—չէ ու չէ, չեմ ուզում տեսնվել նրա հետ։

—Նա չէ ուզում տեսնվել իր հօր հետ... շատ լաւ... խորին դառնութեամբ կրկնեց Ահմէդի հետ խօսող մարդը և դիմեց դէպի այն վրանը, ուր նրան իջևան էին տուել։

Ահմէդը սառած կանգնել, երկար նայում էր նրա ետևից։ Երբ նա բոլորովին աչքից հեռացաւ, ներքինին գլուխը շարժելով, ասաց իր մտքումը.

—քեզ նման հայրը արժան չէ այնպիսի զաւակի երեսը տեսնելու....

Այդ մարդը Սիւրբի հայրն էր, Տաթևի մէլիք Դաւիթ «ուրացողը», որ թուրքի անունով իրան Բաղր էր կոչում։ Մի ժամանակ նա Տաթևի մէլիք Գիւլամիրի մօտ գզիրի և լրտեսի պաշտօն էր կատարում և շատ սիրելի էր նրան, վերջը կամենալով իր բարերարի տեղը գրաւել, թունաւորեց նրան, և իր աղջիկը կաշառք տալով խանին, ոչ միայն կարողացաւ ազատվել այդ չարագործութեան համար պատժվելուց, այլ իր զոհի փոխարէն ժառանգեց Տաթևի մէլիքութիւնը։ Բռնութեամբ, դաւաճանութեամբ և եղեռնագործութեամբ յափշտակված իշխանութիւնը բոլորովին անտանելի դարձաւ Տաթևի հայ ժողովրդին, առաւել այն պատճառով, որ Դաւիթը խանին աւելի հաճոյանալու համար փոխեց իր կրօնը։ Այս պատճառով «ուրացողը» անբաւական ժողովրդին իր ճնշման տակ պահելու համար ստիպված էր այնուհետև միշտ նորանոր միջոցներ հնարել խանի սիրտը գրաւելու և նրա պաշտպանութիւնը վայելելու համար, որպէս զի նրա օգնութեամբ կարողանայ պահպանել իր խախուտ դիրքը։

Միջակ հասակով մարդ էր նա, մի ոտքով կաղ. երեսը կապիկի դէմքի նմանութիւն ունէր, մազով պատած մինչև աչքերի կոպերը։ Եթէ հաւատանք ժողովրդական կարծիքին, թէ «չօլախ» մարդիկը «հարամզադ» (հնարագէտ) կը լինեն,—պէտք է ընդունենք, որ Դաւիթը մարմնացած խորամանկութեան ճիշտ տիպարն էր։ Դա այն տեսակ մարդիկներից էր, որոնց մասին ասում են, թէ սատանայից եօթն օր առաջ են ծնվել։

Բայց այդ մարդը, որ ոչ տխրել, ոչ յուսահատվել և ոչ բարկանալ գիտէր, այդ մարդը, որ ոչ մի անաջողութեան, ոչ մի դժուարութեան դէմ իր կեանքում չէր դողացել,—ներքինու խօսքերը լսելուց յետոյ, մի խեցեղէն ամանի նման, կարծես, փշրվեցաւ։ Հարազատ աղջիկը զզվում էր տեսնել նրա երեսը։ Դա մի սարսափելի հարուածք էր։ Աշխարհից արհամարհված, հազարաւոր թշուառների անէծքով դատապարտուած մարդը միշտ ոչինչի տեղ էր դնում իր զոհերի լացը, տանջանքը և արիւնը... բայց աղջկայ բողոքը ազդեց նրա վրա։ Տատանվելով շարունակում էր նա իր անհաստատ քայլերը դէպի իջևանը, որ դեռ բաւական հեռու էր։ Ճանապարհը ընկած էր ոտնակոխ եղած խոտաբոյսերի միջով, որ ձևացնում էր մի օձապտոյտ շաւիղ։ Թռչունները չորս կողմում չրկչրկում էին, բայց նա ոչինչ չէր լսում։ Արեգակի վառ ճառագայթների մէջ անտառի ծառերը նկարվում էին իրանց բոլոր գեղեցկութեամբ, բայց նա ոչինչ չէր տեսնում։ Կարծես, ամեն զգացմունք, ամեն կիրք սպանված լինէին նրա սրտում։ Նրա ուղեղը այդ րոպէում այն աստիճան խառնաշփոթութեան մէջ էր, որ անկարող էր իր մտածութիւնները որ և իցէ կարգի դնել։ Նա ասելու շատ բաներ ունէր իր աղջկան, նա իր նպատակները իրագործելու համար յոյս էր դրած աղջկայ աջակցութեան վրա։ Բայց բոլորը քանդվեցաւ։ Կամ այսօր պէտք էր յաջողեցնել, կամ ամեն ինչ կորած էր յաւիտեան...

Այսպիսի դառն և յուսահատ մտածութիւնների մէջ գնում էր նա, յանկարծ թուփերի միջից դուրս եկաւ նրա առջև մի մարդ, որը սպասում էր նրան։

—Բարի լինի... խօսեց մէլիքը հարցական հայեացքով նայելով նրա երեսին։

—Կարող էր բարի լինել, բայց... անծանօթը չաւարտեց խօսքը, սկսեց աչք ածել իր շուրջը, զգուշանալով, մի գուցէ մի ուրիշ լսող լինէր։

—Ուրեմն ոչինչ չը շինեցիք... հարցրեց մէլիքը անհամբերութեամբ։

—Ոչինչ... և անկարելի էր մի բան անել...

—Ի՞նչու...

Անծանօթը սկսեց հազիւ լսելի ձայնով պատմել, թէ ինքը ամեն հնարներ գործ դրեց, բայց չը յաջողվեցաւ... Այն օրից, որ գերիները բերված են, ասաց նա, խանումը (խօսքը Սիւրբի մասին էր) մի առանձին խնամքով հոգ է տանում նրանց վրա։ Իրան կասկածելի չանելու համար, խանումը իր հոգատարութիւնը ծածուկ յանձնել է Ահմէդ ներքինապետին։ Այդ ծերունի աղուէսը այն աստիճան խորամանկ է, որ սատանային այնպէս կը նալէ, որ ոչինչ չի զգայ։ Նա խանումին կուռքի նման պաշտում է։ Եթէ խանումը ասէ՝ գնա ջուրի կամ կրակի մէջ ընկիր, նա առանց ծպտուն հանելու, կը կատարէ։ Ահմէդը ոչ միայն կերակրում էր գերիներին, այլ գիշերները այցելում էր նրանց մօտ և պահապաններ էր նշանակում հսկելու, որ նրանց գլխից ոչ մի մազ չը պակսի։ Անկարելի էր նրանց մօտ մտնել։ Պահապանները բոլորը Ահմէդի մտերիմներն էին, հազար թումանի համար նրան չեն դաւաճանի։ Բացի դրանից, Ահմէդը խանի մօտ մեծ նշանակութիւն ունի, բոլորը նրանից վախենում են։

Որքան առաջ էր գնում անծանօթը իր պատմութեան մէջ, մէլիքի դէմքը աւելի և աւելի մռայլվում էր, նրա շրթունքը դողդողում էր և աչքերում վառվում էր կատաղութեան կրակը։ Անիրաւ աղջիկը հասցրեց նրան երկրորդ հարուածը և այդ աւելի սաստիկ էր։ Նա զրկեց հօրը իր թանգագին յոյսերից. նա ոչնչացրեց հօր բոլոր պլանները, որ այնքան մեծ աշխատութեամբ յօրինել էր նա....

—Շնորհակալ եմ, Յիւսէֆ, խօսեց մէլիքը զսպելով իր բարկութիւնը,—դու դարձեալ արել ես, ինչ որ կարող էիր անել, եթէ չը յաջողվեցաւ, դրանում դու մեղաւոր չես։ Ես դարձեալ կը տամ քեզ այն, ինչ որ խոստացել եմ։

Նա հանեց իր գրպանից մի քսակ և մեկնեց թուրքին. վերջինը հրաժարվեցաւ ընդունել։ Մէլիքը երկար թախանձում էր նրան, յայտնելով, թէ շատ կը վշտանայ, եթէ նա մերժէ ոսկիները, և դարձեալ յիշեցրեց, թէ ինքը Յիւսէֆի յանձն առած պարտքը կատարած է համարում, իսկ անաջողութիւնը պէտք է վերաբերել նրանից անկախ պատճառների։ Թուրքը ընդունեց ոսկիները, և գլուխ տալով, հեռացաւ։ Նա խանի ախոռապետն էր, որ մի ժամանակ դահճի պաշտօն էր կատարում։ Իր ծառայութեան ընթացքում ուղիղ հազար մարդիկ մորթելուց յետոյ, նա մի ներքին սնահաւատութեամբ զղջացաւ, թողեց այդ արիւնոտ պաշտօնը և իր դանակը թաղեց գերեզմանատան մէջ, ինչպէս լաւ որսորդները թաղում են հողի մէջ իրանց հրացանը հազար երէ սպանելուց յետոյ։ Բայց Յիւսէֆը, որ այժմ իրան տուած էր չափազանց արբեցութեան, չը կարողացաւ պահել իր ուխտը, և մէլիքը օգուտ քաղելով նրա թուլութիւնից, կարողացաւ կաշառել նրան, կատարել տալու մի նոր եղեռնագործութիւն, մանաւանդ, որ նա մի քանի օր առաջ խաղի մէջ տանել էր տուած բաւական խոշոր գումար, և մէլիքի խոստացած ոսկիներին շատ կարօտութիւն ունէր։ Բայց բոլորը անցաւ իզուր... բոլորը ոչնչացաւ Սիւրբի բարեսրտութեան առջև... և այդ աւելի կատաղեցնում էր մէլիքին, որ հարազատ աղջիկը խոչընդոտներ էր սարքում նրա դէմ...

հետ բարոյական կապ կարող է ունենալ, որին կարող է հաւատալ, որին կարող է սիրել: Մեր կամքից դուրս մեր գլխին նշանակված քահանայի հետ մենք ոչինչ բարոյական կապ ունենալ չենք կարող. քահանան քաղաքի այս կամ այն բաժնի ոստիկան չէ, որի օրինաւոր կարգադրութիւններին մենք պէտք է հպատակվենք, լինի այս մարդը Կիրակոսեան, թէ Մարտիրոսեան... Քահանայի հետ մեր ունեցած յարաբերութիւնները բուն հոգեւոր յարաբերութիւններ են, որոնց որ և է պայմանի տակ գցելը ոչ թագաւորներ, ոչ էլ կաթողիկոսներ կարող են: Այդ հոգեւոր յարաբերութիւնների մէջ մարդը կատարելապէս ինքնիշխան է, կատարեալ տէր է և ոչ մի կաթողիկոս չէ կարող մեզ հրամայել խոստովանվել այս կամ այն քահանայի մօտ, պսակվել այս կամ այն քահանայի ձեռքով, մկրտել երեխային այս կամ այն քահանայի ձեռքով: Դրա մէջ մեր ընտրութիւնը պէտք է կատարելապէս ազատ լինի, որովհետև դա մեր բուն հոգևոր, ներքին բարոյական կեանքին է վերաբերվում, որի մէջ միջամտել իրաւունք չունեն ոչ հոգևոր, ոչ էլ մարմնաւոր իշխանութիւնը: Յոյս ունենք որ Տէր-Յովհաննէսի ծուխը այդ ճշմարտութիւնը կը հասկանայ և այնքան ինքնասիրութիւն կունենայ, որ տօն օրերին կը նախապատուի մնալ բոլորովին առանց քահանայի, քան թէ ընդունել Էջմիածնի ձեռքով մեր գլխին բռնի կերպով նշանակված մի քահանային:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԼՕԿՍԵՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակները օր ըստ օրէ շատանում են ֆիլօքսերայի և նրա Ղրիմում բերած վնասի վրա գանգատները: Լաւ գիտենալով թէ ինչքան դժբաղդութիւն կը լինի Անդրկովկասի համար, եթէ ֆիլօքսերան անցնի այնտեղ, կարծում եմ, որ աւելորդ չի լինի ծանօթացնել մեր հասարակութիւնը այդ չարիքի և այն միջոցների հետ, որոնք գործ են դնվում դրան ջնջելու համար:

Եթէ Ֆրանսիայում՝ ուր թէ այգեպանութիւն և թէ գիւղատնտեսութիւնը արհասարակ շատ անգամ առաւել է զարգացած, քան թէ մեզանում՝ ուր առուներով և այլ զանազան գործիքներով ջուր են հասցնում անջուր տեղերը, որ շատ մեծ նշանակութիւն ունի ֆիլօքսերայի ջնջելու համար.—կարճ ասելով—եթէ այն երկրում, ուր թէ գիտութիւնը և թէ ուրիշ միջոցները առաւել յարմարացրած են պատերազմելու այդ տեսակ չարիքի հետ, եթէ այնտեղ ջնջեցին ֆիլօքսերային, երբ նա բազմացաւ, միայն ջնջելով խաղողի այգիները, ի՞նչ կը պատահի Անդրկովկասին եթէ պատրաստ չը լինենք հէնց արմատում ոչնչացնել, եթէ երևայ ֆիլօքսերան և չաշխատենք ամեն տեսակ միջոցներով հեռացնել այդ ֆիլօքսերայի երևալու դժբախտ օրը:

Որ առաւել լաւ երևայ ֆիլօքսերայի բերած վնասը, առաջ կը բերեմ թւերը: Մինչև 1865 թիւը Ֆրանսիան տալիս էր ամեն տարի 448 միլիօն վեդրօ գինի, իսկ 1876 թուականին ամբողջ Ֆրանսիայում հազիւ կարողացան ստանալ 326 միլիօն վեդրօ: Ուրեմն 11 տարվայ միջոցումը այնպէս բազմացաւ ֆիլօքսերան, որ 112 միլիօն վեդրօ վնաս հասցրեց Ֆրանսիային. ի՞նչ կը պատահէր այս երկրի գինեգործութեան, եթէ հասարակութեան և կառավարութեան աշխատանքով չը ջնջէին ֆիլօքսերային, կամ մի ուրիշ կերպով չը քչացնէին նրա բերած վնասը:—Ֆիլօքսերան բոլորովին աւերակ կը դարձնէր Ֆրանսիայի խաղողի այգիները և սրա հետ կոչնչացնէր գինեգործութիւնը: Մի և նոյնն էլ կը պատահի Անդրկովկասին, եթէ այդտեղ էլ երևայ և բազմանայ ֆիլօքսերան:

Բոլոր ասածս աչքի առաջ ունենալով, կարծեմ որ չեմ սխալվել ասելով, թէ այս միջատի երևալը մեծ դժբախտութիւն կը լինի ամբողջ Կովկասի համար: Եթէ մորեխը ահ ու դող տարածեց ամբողջ Անդրկովկասի բնակիչների մէջը, ի՞նչ կանէ ֆիլօքսերան, որ շատ անգամ ահեղ և զօրեղ թշնամի է, քան թէ մորեխը. այդ ամեն մէկը լաւ կը հասկանայ:

Աւելորդ եմ համարում երկար խօսելով աշխատել հաստատել թէ մեզ հարկաւոր է ծանօթանալ այդ թշնամու թոյլ կողմերի և ջնջելու միջոցների հետ. կասեմ մի քանի խօսք ֆիլօքսերայի կեանքի և ապա նրա ջնջելու միջոցների մասին:

Առաջին անգամ 1865 թ. Ֆրանսիայում նկատեցին որթի մի նոր հիւանդութիւնը և 1868 թուականին ֆրանսիացի ուսումնական Պլանշօնը (Planchon) գտաւ և հիւանդութեան պատճառը—այն է ֆիլօքսերան.—Phylloxera vastatrix. Նրանից յետ անցաւ 11 տարի և խաղողի այգիների մեծ մասը դարձան աւերակ մինչև կը գտնէին նրա ջնջելու միջոցներ:

Այս միջատները ապրում են խաղողի որթի արմատի վրա և կերակրվում են արմատի մէջ եղած հեղուկով: Իրանք հազիւ հասնում են 1/3 գծաչափ մեծութեան, դեղնագոյն են և բոլորեքեան կարող են ձու ածել առանց խառնակվելու.—սրանք անուանվում են „անսեռ մայրեր“: Ամառվայ միջոցում բազմանում են մինչև 6-երորդ սերունդ: Այն միջատները, որոնք դուրս են գալիս ձուերից աշունքին, այսինքն վերջին սերունդը—շատ անգամ փոքր են առաջիններից և առաւել մութ գոյն ունին: Սրանք ձմեռը անց են կացնում արմատների ճեղքուածքներում կամ թէ արմատի կաշիի տակը. գարունքին գոյնը փոքր ինչ փոխում են մեծանում: Առհասարակ 8 օրից յետ ձուերից դուրս են գալիս փոքր միջատները, իսկ դուրս գալուց 8 օր անցած այս միջատները ածում են ձու: Բացի սրանցից մի և նոյն տեղում պատահում են էլի ուրիշ անհատներ. Նրանք փոքր ինչ մեծ են նկարագրածից և ունեն փոքրիկ թեւեր: Սրանք ամբողջ կեանքը գետնի մէջ չեն անցկացնում ինչպէս առաջինները, այլ դուրս են գալիս այնտեղից, փոխում են կաշին, նոցա թեւերը մեծանում են և այսպիսով նրանք կարող են լինում թռչել: Սրանք էլ նմանապէս դեղնագոյն են և ձու ածելու համար խառնակվելու կարևորութիւն չունենն: Ձուերը ածում են սրանք որթի տերևների վրա թւով 3—5: Սրանց ածած ձուերը բոլորը միատեսակ չեն—մի քանիսը մանր

Դաւիթ ուրացողը երկչոտ էր, ինչպէս լինում են ամեն նենգաւոր մարդիկ, որոնց բոլոր զօրութիւնը ամփոփված է լինում մտաւոր ուժի մէջ. Նա զուրկ էր արութիւնից, նա զուրկ էր քաջութիւնից, բայց այդ չէր արգելում նրան միշտ խրած ունենալ մի զոյգ ատրճանակ գօտիի մէջ և միշտ կողքից քարշ ընկած ունենալ իր երկայն թուրը, որին երբէք չէր գործ ածում. Բայց նա սովորութիւն ունէր միշտ պարծենալով խօսել իր երևակայական քաջագործութիւնների վրա և հաւատացնել, թէ ոտքի կաղութիւնը առաջ էր եկել հրացանի գնդակից, որը դեռ դուրս բերված չէր, թէև մօրից կաղ ծնված «չօլախ» Դաւիթը բոլոր տաճկացիներին ծանօթ մի անձնաւորութիւն էր.

Տխուր յուսահատութեան մէջ հասաւ նա այն վրանը, որ նշանակված էր նրա համար իջևան. Այստեղ սպասում էր նրան մի երկրորդ մարդ. Նա բարձրահասակ, ցամաք կազմուածքով և բաւական չնորհալի դէմքով մի ծերունի էր, որի սպիտակ, փառահեղ մօրուքը, ներկված լինելով հինայով, ստացել էր ծիրանի գոյն. Նա նոյնպէս խրած ունէր իր քիրմանի շալի թանգագին գօտիի մէջ մի զոյգ ատրճանակ և երկայն թուրը, արծաթէ կօթով և արծաթէ պատեանով, դրած էր ծնկների վրա. Նա ծալապատիկ նստած էր նախշուն գորգի վրա և թիկն էր տուած կարմիր մախմուրով պատած փափուկ մութաքաներին, որ բերված էին խանի հանգերձատնից յարգելի հիւրերին պատուելու համար. Տեսնելով Դաւիթին, նա անհամբերութեամբ հարցրեց.

—Ի՞նչ լուր բերեցիք...

Դաւիթը թագցրեց նրանից, թէ Սիւրին, իր աղջիկը, չընդունեց նրան, չը կամեցաւ տեսնվել հօր հետ. Այդ անպատւութիւնը կարող էր պակասեցնել Դաւթի կշիռը իր խօսակցի աչքում, կարող էր կոտրել նրա համարումը. Դաւիթը սովորութիւն ունէր պարծենալ իր աղջկանով և ամենին ցոյց տալ, թէ նրա միջնորդութեամբ ամեն դժուարին գործ իր ձեռքում հնարաւոր էր, որովհետև Ֆաթալի-խանի սիրելի խանումը նրա աղջիկն էր, և ամեն բան անել կը տար իր ամենակարող ամուսնին. Սիւրիի հետ չը տեսնվելու պատճառը, ասաց նա, տիկնոջ մի փոքր տկարութիւնն է, որի համար նա ոչ ոքի չէ ընդունում այսօր. Բացի դրանից, ասաց նա, այս գիշեր պատահել է տիկնոջ հետ մի անախորժ դէպք, և հաղորդեց նրա մազերի կտրվելու պատմութիւնը, աւելացնելով, թէ այդ շատ լաւ է պատահել, որովհետև դրա համար գուցէ կարտաքսվեն խանի հարեմից մի քանի անզգամ կնիկներ, որոնք միշտ նախանձվում էին Սիւրիի փառքին. Գալով դահճից ստացած տեղեկութիւններին, Դաւիթը ասաց, թէ դահիճը ոչինչ չէ կարողացել յաջողացնել.... միայն թագցրեց, որ արգելառիթը եղել է Սիւրին....

—Դա շատ վատ է... պատասխանեց ծիրանի մօրուքով մարդը և ընկղմվեցաւ խորին մտածութեան մէջ. Նրա բազմահօգ դէմքից երևում էր, որ խնդիրը խիստ ծանր և կարևոր էր, թէ շուտով պիտի ոչնչանային ահագին յոյսեր, թէ այդ յոյսերը կախված էին մի պատանու մահից... որը չը յաջողվեցաւ....

Այդ փառահեղ մարդը Կարմիր վանքի կամ Երիցվանիկ աւանի մէլիք Ֆրանգիւլն էր. հայոց հարուստ և ազդեցութեան տէր իշխաններից մէկը:

—Այդ վատ եղաւ...կրկնեց նա փոքր ինչ վրդովված ձայնով.—Դրանից յետոյ մեզ ինչ է մնում անել... ես յոյս ունէի, որ Ցիւսէյինը (դահիճը) կը կատարէ մեր ցանկութիւնը... բայց բոլորը ոչնչացաւ....

Նա սպասում էր Դաւիթից ստանալ մի մխիթարական պատասխան, բայց այս վերջինը, չը նայելով իր սատանայական խորագիտութեանը, այն աստիճան չփոթված, այն աստիճան մոլորված էր մտքով, որ չը գիտէր, թէ ինչ խորհուրդ պէտք էր տալ.

Այդ երկու հայ մէլիքները հագնված էին բոլորովին պարսից աւագների ձևով. գլուխներին դրած ունէին բուխարայի սև մորթից երկայն գդակներ, հագել էին նուրբ մետաքսից կարմիր գոյնով կաբայ (պատմուճան), որ իջնում էր ծնկներից ցած, և նրա վրա կանաչ մահուդից ջիւբբայ (վերարկու), որ հասնում էր մինչև գետին. Մէջքները պնդած էին Քիրմանի գոյնգոյն շալից հաստ գօտիով. Երկուսի էլ գլուխների մազերը բոլորովին ածելած էին, թէև հայերը սովորութիւն ունէին ածիլել գագաթի մէջ տեղը միայն. Երկուսի էլ մօրուքները և ձեռները ներկված էին հինայով. Երկուսն էլ խօսում էին պարսկերէն, երբ սպասաւորը ներս էր մտնում և նրանց ղէլյան էր մատուցանում ծխելու համար. Բայց երբ նա դուրս էր գնում, սկսում էին հայերէն խօսել, որ հասկանալի չը լինի.

—Դեռ յոյս կայ... ասաց Դաւիթը խորհրդաւոր կերպով.—այսօր Թորոս իշխանը պիտի գայ գերիները գնելու. մենք ամեն հնար պէտք է գործ դնենք, որ նա չը կարողանայ գնել:

—Ի՞նչ հնարք, հարցրեց մէլիք Ֆրանգիւլը, դարձեալ յուսահատ մարդու եղանակով.

—Մենք պէտք է աշխատենք համոզել խանին, որ նա նշանակէ գերիների համար մի այնպիսի մեծ փրկանք, որ Թորոս իշխանը չը կարողանայ վճարել.

—Դրանով ինչ կը շահենք.

—Դրանով կը շահենք մի քանի օրեր, գուցէ մի քանի շաբաթներ, և այդ ժամանակի ընթացքում շատ բան կարելի է անել...

«Ուրացողի» խորհուրդը բոլորովին նպատակայարմար էր գտնում մէլիք Ֆրանգիւլը. Նա այնքան ուրախացաւ, որ քիչ էր մնում, պիտի գրկէր և համբուրէր խորամանկին, բայց իր հպարտութիւնը թոյլ չը տուեց այդ աստիճան թեթև լինել: Նա հարցրեց.

—Դուք հաստատ գիտէք, որ Թորոսը այսօր գալու է.

Նա Թորոս իշխանին, Զանգուրի ամբողջ գաւառի տիրոջը, լոկ անունով միայն Թորոս էր կոչում, կարծես, «իշխան» տիտղոսը այրում էր նրա լեզուն. Հայերից իշխան, բացի իրանից, ուրիշ ոչ ոք չը պիտի լինէր,—այդ էր այդ փառասէրի ուխտը.

—Գիտեմ, պատասխանեց Դաւիթը, ինքն էլ հետևելով մէլիքի եղանակին,—հաստատ գիտեմ, որ Թորոսը այսօր գալու է. Նրան հիւրասիրելու համար խանի խոհանոցում մեծ պատրաստութիւններ էին տեսնում.

Վերջին խօսքերը աւելի զայրացրին մէլիք Ֆրանգիւլին. պատրաստութիւններ էին տեսնվում պատւելու այն մարդուն, որին ատում էր ինքը, որի թշնամին էր. որը այսօր պիտի գար գնելու մի գերի, որի մահն էր ցանկանում ինքը...

—Ուրեմն պէտք է շտապել խանի մօտ, ասաց նա, աշխատելով սառնասիրտ երևալ.—քանի դեռ այդ անպիտանը չի եկել, պէտք է խանի հետ խօսել ինչ որ հարկաւոր է.

—Նա ճաշից առաջ չի գայ, պատասխանեց Դաւիթը.—մենք մի քանի ժամ ունենք մինչև ճաշ, այսու ամենայնիւ, պէտք է շտապել...

Երկու մէլիքները հագան իրանց թանգագին վերարկուները, որոնց եզերքը զարդարած էին ոսկէ թելերով. կապեցին իրանց արծաթապատ թրերը և սկսեցին դիմել դէպի խանի վրանը, խափանելու հարիւրաւոր հայ գերիների փրկութիւնը, որ ընկած էին մահմեդական բռնաւորի ձեռքը.... Մէլիք Ֆրանգիւլը, իբրև աւագ, գնում էր առաջ, իսկ մէլիք Դաւիթը, որպէս նրանից աստիճանով կրտսեր, գնում էր նրա ետևից. Նրանց հետևում էին մի խումբ ծառաներ, որոնց պարսկական սովորութեամբ իրանց հետ ման էին ածում. Ծառաները բոլորն էլ մի—մի սուր ունէին կապած, իսկ իրանց մնացած զէնքերը թողել էին իջևանում, որ յատկացրած էր երկու մէլիքների ծառաների համար. Հանդիպաւոր «սալամը» առաջ էր ընթանում և ճանապարհին ով որ հանդիպում էր, նրանց գլուխ էր տալիս. Մէլիք Դաւիթը երբէք իր կեանքում այսպիսի եռանդոտ ոգևորութեամբ չէր դիմել դէպի մի ձեռնարկութիւն որպէս այսօր. Նա պիտի աշխատէր խափանել հարիւրաւոր հայ գերիների ազատութիւնը, նա պիտի ամեն ջանք գործ դնէր մաշել, ոչնչացնել նրանց խանի բանտերի մէջ. Մէլիք Ֆրանգիւլը մի և նոյն չար դիտաւորութիւնն ունէր, վրէժխնդրութեան մի և նոյն անախորժ տրամադրութեան մէջ էր գտնվում նա. Դրանք այնտեսակ մարդիկներից էին, որոնց մեծ հաճութիւն է պատճառում գաղանային եղեռնագործութիւնը, մանաւանդ երբ գործի մէջ խառն էին շահ, փառք և տիրական նպատակներ...

(Կը շարունակվի)